

ՆԱՄԱԿՆԵՐ, ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ПИСЬМА, ЗАМЕТКИ

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՀԱՅԵՐԵՆ ԽԱՂԵՐԻ ԲԱՌԱՅԻՆ ԿԱԶՄԸ

Սայաթ-նովան իր հայերեն խաղերում գործածել է 2020 բառ՝ Գրանցից 1274-ը հայերեն բառեր են (63%), արից 672-ը գրական բառեր, 280-ը՝ բնականորեն բարբառային բառեր, 277-ը՝ ըստ Թրիլիսի բարբառի հնչյունափոխված բառեր, 24-ը՝ միայն Թրիլիսի բարբառին յուրահատուկ բառեր, իսկ 24-ը՝ գրաբարյան (ավելի ճիշտ՝ գրաբարախառն Թրիլիսահայ) բառեր։ Ընդամենը բառերն ըստ լեզվական խմբերի, հետևյալ պատկերն են ներկայացնում.

արարերեն — 585 բառ	հունարեն — 1 բառ
պարսկերեն — 253 բառ	ասորերեն — 2 բառ
աղբրեջաներեն — 97 բառ	սուսերեն — 1 բառ
պարսկ.-արարերեն — 21 բառ	ֆրանսերեն — 1 բառ
արար.-աղբրեջաներեն — 6 բառ	պարսկ.-հայերեն — 14 բառ
վրացերեն — 2 բառ	արար.-հայերեն — 11 բառ
պարսկ.-վրացերեն — 1 բառ	աղբր.-հայերեն — 9 բառ

Ինչպես տեսնում ենք, Սայաթ-նովայի լեզուն միատարր չէ։ Այն կազմված է գերազանցապես հայերեն, ապա՝ արարերեն, պարսկերեն, աղբրեջաներեն, վրացերեն և մեկ-երկու սուսերեն, ֆրանսերեն, հունարեն և ասորերեն բառերից։

Սայաթ-նովան իր հայերեն տաղերը գրել է Թրիլիսի բարբառով։ Այդ բարբառը գերազանցապես Թրիլիսի բաղադրի հայերի խոսակցական լեզուն է եղել և նրանց կողմից կոչվել է ուղղակի «բաղկի լեզու»։ Բայց հայերենի համընդհանուր բառերից, որոնց մի մասը Թրիլիսի բարբառում ենթարկվելով նրա հնչյունաբանական և ձևաբանական փոփոխությունների՝ բնորոշ ձևափոխություն է ենթարկվել (օրինակ՝ ոտք-վուտ, լեզու-լիզու, երկիր-չիրգիր, ես-յիս, մենք-մինք և այլն), Թրիլիսի բարբառում և Սայաթ-նովայի տաղերում կան հայերեն բարբառային այնպիսի բառեր, որոնք միայն այդ բարբառին են հատուկ և չկան ուրիշ բարբառներում։ Օրինակ՝ բոռլի-բյուր, բոռլի-բոռլի-բյուրավուր, շատ անշափ (42), զամ-անգամ (38), դիփ, դիփուճ-բոլոր (68), Լեխ-տվեց (16), իմում-հետս (33), ինչու-մինչև որ (37), հնախ-այնպիսի (4), մերաչ-հանկարծ, միանգամից (59), մուլտի-համբերություն (58), նուրմեկ, նուրմեկանց-դարձ-յալ, նորից (10, 30) և այլն²։

Սայաթ-նովայի հայերեն տաղերում բավական շատ են մեր ժամանակակից գրական լեզվին հատուկ բառերը։ Սայաթ-նովայի ժամանակ դեռ աշխարհաբար գրական լեզու չկար։ Մա-կայն աշխարհաբար խոսակցական լեզվի զարգացումը բնթանում էր այն ուղիով, որ իր մեջ մերելով գրաբարից ու բարբառներից եկած բառերը, աստիճանաբար պիտի դառնար բազում բարբառներով խոսող հայության համար բնականորեն ու մատչելի լեզու։

Սայաթ-նովայի տաղերում հանդիպում ենք արդի լեզվին հարազատ հետևյալ բառերի՝ «գրլիսիս ծառա օխար նուրմաւս ունիմ» (59), «հիմնրո վերստին նուրեցին» (62)։ Դառաի

1 Սայաթ-նովայի հայերեն խաղերի բառաբանի համար հիմք է բնորոշվել Մ. Հասրաթյանի կողմից կազմված Սայաթ-նովայի հայերեն, վրացերեն և աղբրեջաներեն խաղերի ժողովածուն (Հայակահայտ, Երևան, 1959)։

2 Փակագծերում եղած թվերը Սայաթ-նովայի հայերեն խաղերի համարակազմումն են։

ծաղիկ հովտաց շուշան իս ինձ տմա» (24), «Թանկ հախով գրեած շրազ իմ» (8), «Բարկ (ընդ)» (3), «անուշահամ գինով լիբրե» (8) և այլն: Ստանափորի հանդավորումն ու չափը պոստ-պանելու համար նա հաճախ խոստովում է բառի սղված բարբառային ձևից և տալիս է բառի արդի գրական ձևը: Օրինակ՝ գրում է Բեգանից, լավանալ, ցամաքիլ, փոխանակ Բիգնից, լավանալ, ցամաքիլ և այլն: Բառակերտման, բառերի օգտագործման հարցում անդամ Սայաթ-Նովան շատ զեպրերում նկարավորին չափով ջանում է խոստովել անտեղի օտար բառեր գործածելուց և նարազատ մնալ հայերենի ոգուն:

Սայաթ-Նովան քաջատեղյակ է եղել գրարար լեզվին: Այդ է վկայում 61-րդ միակ գրաբար խաղը, որի տողերի կեսը գրաբարով է գրված եղել, կեսը՝ թուրքերեն³: Այդ գրաբարը, սակայն, մեր դասական գրաբարը չէ, այլ գրաբարախառն թրխիսահայ բարբառն է: Ահա մի քանի նմուշներ այդ խաղի կիսատողերից. Անապատեն բարբառեցաւ... զորս ամենայն յուր հավաքաց... ավետիս համայն առաւելալ... աղաչում եմ երեսն անկալ... երեւոյորչուն հայտնեցիր... վասն աշխարհին աղոթեցիր, զլուս վարբապետ ճշմարտութեան, խոսկիւրա անգին ջալանիր, քաղ ու պարծան իս կուսանանգ, մոտունբող ամեն տիղ ծավալի և այլն: Այլ խաղերում նույնպես նա շործածել է գրաբարյան բառեր: Օրինակ՝ տեսաւիլ (16), մեռանիլ (16), մտոմ (34), Խուրա (49): Բարբառային լեզուն խառն է գրաբարյան բառերով: Օրինակ՝ Բեգուց մտոմ նարտաւ րլի, զիփունին կու ախախ, զոզալ (34), միղրիրս քավիմ (64), կերան ու դառան մերկանդամ (64), սանդարամիտրն զորոմ սարսկաւ (61):

Երբ երգի թեման կրոնական-եկեղեցական բնույթ է կրում (օրինակ՝ 62-րդ խաղում), Սայաթ-Նովան ջանում է երգին ավելի զրական ձև տալ, գրականացնել այն: Օրինակ՝ միալանբրտ քաղցր ծալնով (փոխանակ օկնով) տաղ արին:

Սայաթ-Նովայի գործածած բառերի 37 0/0-ից ավելին օտար բառեր են: Իրանց գերակշռող մասը արաբերեն, պարսկերեն և աղբրեջաներեն բառեր են, ըստ որում արաբերենն ու պարսկերենը Թրխիսի բարբառին միջնորդարար անցել են աղբրեջաներեն լեզվի միջոցով: Արաբերեն բառերի թիվը նախում է 298-ի: Այդ բառերն իրենց բնույթով շատ բազմազան են: Բացի կոնկրետ առարկաներ կամ երևույթներ արտահայտող արաբերեն բառերից, կան նաև մշակույթի, արհեստների, առևտրի, բժշկության, պետական պաշտոնեությունների և այլ բնագավառներ ցույց տվող արաբերեն բառեր: Այսպես, յփնակ՝ արհեստների վերաբերյալ բառեր են առլաս, դումաշ, դարաղ, դալամբաւ, մշակույթին վերաբերող բառեր են դալամ, դավթաւ, դազալի, դաւանեշա և այլն: առևտրին վերաբերող բառեր են դուբան, զաւափ, բժշկության, զեղորայքի և բույսերի վերաբերող բառեր են եւլիմ, մելամ, զափոանգ, դաւաւփիլ, պետական-վարչական պաշտոնությունների կարգի բառեր են մեջիս, նազիր, վեզիր, վեփիլ, սուլթան և այլն:

Արաբերեն բառի և հայերենի բայական վերջավորությամբ կազմվում են հարադիր բայեր և բայական դարձվածքներ: Օրինակ՝ քամամ-լրիլ, բամամիլ-ամրողջանալ, խեւ-օգուտ, խեւիլ-խեւիլի-օգտվել, օգուտ քաղել, խիալ-կասկած, խիալ տանիլ կամ խիալ անիլ-կասկածել, դալուլ անիլ-համաձայնել, մալում-հայտնի, որոշ, մալում անիլ-ճանաչվել և այլն:

Սայաթ-Նովայի տաղերի մեջ օգտագործված օտար բառերի մյուս մեծ խումբը պարսկերեն բառերն են: Պարսկերեն գոյական անուններն ու ածականները համարյա նույնությամբ մտել են բարբառի մեջ, միայն երբեմն ենթարկվելով որոշ նշանափոխության: Թրխիսի բարբառում ու Սայաթ-Նովայի տաղերում պարսկերեն բառերով և հայերեն օժանդակ բայի միջոցով կազմվում են բազմաթիվ հարադիր բայեր: Օրինակ՝ բեղամազ անիլ-վերափոխել, դաստուր տալ-թույլատրել, բնամ զալ-ծագել, սերել, և այլն: Նույնիսկ պարսկերեն բայական կազմությամբ բառեր բարբառում չի գիտակցվում որպես բայ և հանդես է գալիս անպայման հայերենի միջնորդությամբ: Օրինակ՝ ուստ-հանդիպել, բայց կիրառվում է միայն օժանդակ բայի օգնությամբ ուստ զալ ձևով:

Պարսկերեն չթերվող խոսքի մասերից մակրայական բառերը նույնությամբ կիրառվում են բարբառում և Սայաթ-Նովայի մոտ Օրինակ՝ անջալ-հաղիմ, աշկաւա-ակնհայտ, բարաւ-կարոին, բաւերաւ-հավասար, շունիլ-որովհետև և այլն:

Սայաթ-Նովայի տաղերում աղբրեջաներեն (ինչպես ուրիշ օտար) բառերով բայեր կազմվում են հետևյալ կերպ.

3 Ստանափորը մեկ ոճով ամրողջացնելու համար Մ. Հասրաթյանը մյուս կեսը կա (թուրքերենը) թարգմանել է հեղինակի գրաբարով:

1) Ազրբեջաններն բայական ձևին ավելանում է հայերեն անորոշ բայի իլ վերջավորությունը (բայն որում ազրբեջաններն արմատական բառի ձայնավորը երբեմն սղվում է), օրինակ՝ բեզաբ-բեզաբիլ կամ բեզբիլ, բաբիլի-հաշտվել և այլն:

2) Հարադիր ձևով՝ ազրբեջաններն գոյական անունների ու ածականների և գործողությունից սույն տվյալ հայերեն որևէ բառի կամ վերջավորության միջոցով, օրինակ՝ բեզամադ անիլ-վիրավորել, զիմիշ անիլ-չխնայել, շափտտալ, զուլուլ անիլ-ծառայել և այլն: Ազրբեջաններն մի շարք մակբայական բառեր անփոփոխ պահպանվել են բարբառում: Օրինակ՝ բալ, սա-սաղ և այլն:

Արարներն, պարսկերեն, ազրբեջաններն բոլոր այս ճառար բառերը բարբառում են: Արարվում են հայերենի բերականական օրենքներին, հարկվում ու խոնարհվում են ինչպես հայերեն բառեր, ստանում են որոշյալ ու ստացական հոգեր, իբ, նիբ, և այլ հոգնակի մասնիկներ:

Սալաթ-նովան իր բանաստեղծական պատկերները կամ միտքը ավելի ուժեղացնելու կամ արտահայտիչ դարձնելու համար հաճախ կոպր-կոպրի միևնույն նշանակություն ունեցող զույգ բառեր է գործածում որպես հոմանիշներ (կամ հայերեն բառերով, կամ խոսք՝ հայերեն և օտար և կամ միայն օտար բառերով): Օրինակ՝ «Ամեն մե մրտիկ տալով տարար խիլբա, բամալա»: Այստեղ «խիլբ»-միտք, գիտակցություն բառին հոմանիշ է արարներն բամալ բառը: Հայերեն հոմանիշներով՝ «անաբառ մաբուր իս, ախլեր» (13): Օտար բառերով՝ «վունց զորա ունիս, վունց շափաբ» («ցանկապատ» նշանակությամբ գործածել է վրաց. զորա և պարսկ. ափաբ բառերը): Վրացերեն բառերով՝ «Ջարուգարբար զրոշա ման իս գալիս ալամի պես (զրոշա և ալամի երկուսն էլ «զրոշակ» նշանակություն ունեն»)»:

Վրացերեն բառերը Սալաթ-նովայի հայերեն տաղերում թեպետ փոքրամիկ են (ընդամենը 22 բառ), բայց թրիլիսի բարբառում զրանք բավական մեծ թիվ են կազմում և բարբառի ամենարևոտ ու ինքնատիպ կողմն են հանդիսանում: Հայ գրականության մեջ թրիլիսի բարբառով զրված շատ հարուստ գեղարվեստական գրականություն գոյություն ունի: Այդ դարձերում առավել կամ նվազ չափով հանդիպում ենք շատ վրացական փոխառությունների: Այսպես՝ օրինակ, մեծ գրամատուրգ Գ. Սահյանյանի կատակերգություններում և արձակ գործերում («Վարինի վեչերը», «Համալի և Հադիդի մասպահները») վրացերեն փոխառյալ բառերի թիվը հասնում է մոտ 300-ի:

Վրացերեն փոխառյալ բառերը թրիլիսի բարբառում և Սալաթ-նովայի տաղերում կաբլի է բաժանել երկու տիպի:

ա) Բառեր, որոնք նույնությամբ, առանց փոփոխության օգտագործվում են թրիլիսի բարբառում: օրինակ՝ պունպունա-կակաշ, թիլիդա-թիլեդ, մարլարա-խոր ափս, կոկորի-կոկան, կավի-բունքից իջնող ոլորուն մազ և այլն: Այս կարգին են պատկանում նաև չթերփող խոսքի մի շարք վրացերեն բառեր, օրինակ՝ խաւ-մերթ, երբեմն, միրամ-իրթի, ջնր-դեռ և այլն:

բ) Բառեր, որոնք հայկական երանգով են օգտագործվում լեզվի մեջ, ինչպես՝ ալամ-զրոշակ, քավալ-իշխան, զիլ-կոճակ, վաքուլ-տերև և այլն: Այս բառերը թեև վրացերեն են, բայց զրկվել են վրացերենին հատուկ վերջավորությունից: Վրացերենում ասվում է ալամի, քավաղի, զիլի, վաքուլի և այլն: Հետեւորար կարելի է ասել, որ այս բառերին թրիլիսահայերը տվել են հայկական նրանգ: Այս կարգի շատ բառեր կարելի է հանդիպել թրիլիսի բարբառով զրի տանված բազմաթիվ ստեղծագործություններում:

Ռուսերենից կա մեկ փոխառյալ բառ՝ վաբ բառը: «Ահա ու ունբառ վիր իս թողի՝ հուրմառ մե ուսն ցարի բարաթ» (47): Ֆրանսերենից նույնպես մեկ փոխառյալ բառ կա՝ աուլ՝ տուլ, տյուլե-զգարշ, բարակ շոր, որ կանաչք իրենց վրա են ձգում (ֆրանս. tulle)։ «Օրբն յարսուն ունդ կու փոխիս, վունց մեկրն չէ աուլի նման» (39): Հունարենից փոխառյալ բառերն են՝ բիւմ-բեմ, պուսա-բանջարեղեն, Բոնիկոն-ժամանակագրություն: Ասորերենից՝ մաբ-պաշտպան, «Երված, խորված ման իմ գալի, մե տիզ չր կա մար ունենամ» (57):

Լեզվի զարգացման այն շրջանը, որ անցել է թրիլիսի բարբառը Սալաթ-նովայից մինչև Բ. Սահյանյանը, բնագրվում է շուրջ 150 տարի: Պատմական իրադարձություններով հարուստ այդ ժամանակամիջոցում թրիլիսի բարբառը բառային կազմի տեսակետից զգալի փոփոխություն ենթարկվեց՝ իր մեջ առնելով նորանոր բազմաթիվ փոխառյալ բառեր և երջար ժամանակ պահպանեց իր ինքնուրույնությունը շնորհիվ իր հայերեն բառային հիմնական ֆոնդի և բերականական կառուցվածքի:

ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆԻ ՊԱՏԵՆԱԳՐԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Այ տպագրության նախաձեռնող Հակոբ Մեղապարաի ջանքերով 1512 թ. Վենետիկում տպագրվեց առաջին հայերեն գիրքը՝ «Պարզառամարտ» Բուն Հայաստանում տպագրության գործը սկիզբ առավ 1771 թ. էջմիածնում, Սիմեոն Երևանցի կաթողիկոսի օրոք:

Տպարան հիմնադրելու գաղափարը Սիմեոն Երևանցուն ներշնչել էր մադրասարենակ ջուղայեցի մեծահարուստ վաճառական Գրիգոր Միրալյան-Չարիկյանցը, որո խոստացել էր էջմիածնում տպարան հիմնադրելու դեպքում հոգալ ամբողջ ծախսը 1770 թ. Հնդկաստանի նվիրակ Հովսեփ վարդապետի գրած պայմանագրից խմացվում է, որ Գրիգոր Չարիկյանցը խոստում էր վճարել 9 հոգար ոսկի, եթե էջմիածնում տպարան կառուցվի: Այդ վավերագիրը պահպանվում է Մաշտոցի անվան Մատենադարանի Արխիվային բաժնում¹:

Կաթողիկոս ձեռնադրվելուց 3 տարի հետո՝ 1766 թ., Սիմեոն Երևանցին սկսում է տպարանի համար տառեր ձեռք բերելու մասին բանակցություններ վարել Կ. Պոլսում և Զմյուռնիայում տպագրական գործով զբաղվող մի շարք անձնավորությունների հետ, բայց հաջողության չի հասնում: Ապա նա որոշում է հենց վանքում, տեղական միջոցներով պատրաստել տառեր, փորագրությունների ու գարդազրերի այլ անհրաժեշտ պարագաներ: Այդ տպարանում տպագրված առաջին գրքի հիշատակարանից խմանում ենք, որ Մկրտիչ արքեպիսկոպոս Շոտթեցին առանց նախնական մասնագիտական կրթության, շնորհիվ իր բնական բնությունությունների, փորագրում է բոլորգիր, նոսրգիր և գլխագիր հուշական տառեր, որոնցով և տպագրվում է առաջին գիրքը: Հարություն էջմիածնեցին բառակազմում է խորաններ, նկարներ, գարդազրեր ու ծաղկազարդեր: Նրան նետագայում աշակերտում էր Խաչատուր զպիրը: Գրաչարներն էին Հովսեփ վարդապետը և Եփրեմ սարկավազը, տպագրիչները («մրազարկ և տպուկ»)՝ Գրիգորն ու Մանուկը և «ցրոզն գրոցն»՝ տիրացու Խաչատուրը: Իսահակ Գեղամացին զբաղվում է խմբագրական և սրբագրական աշխատանքով և 3 տարի հետո դառնում է տպարանի կառավարիչ ու կարգադրիչ:

Տպարանը հիմնադրվում է 1771 թ. վանքի բակում մի փոքրիկ անհարմար շենքում և կոչվում է Ս. Գրիգոր Լուսավորչի անունով: Տպարանի շենքը 1773 թ. մի փոքր բնդարձակվում է և բարեկարգվում, որի մասին Սիմեոն Երևանցին նույն թվականին Չարիկյանցին ուղղած իր նամակում գրում է². «...պտպագրատունն սուկալ ինչ փոքրիկ էր, յայտ ամի մեծացուցար, զի ամենայն գործոց և գործավորաց նոցի, բնդարձակ տեղիւ լինիցին մերձ միմեանց...»:

Էջմիածնի տպարանի առաջին արգասիքը Սիմեոն Երևանցու «Գիրք աղօթից, որ կոչի Զրօստրան հոգևոր» գիրքն է, որից երկու օրինակ պահպանվել է Մատենադարանի նախագ գրքերի խմբարածուում (№№ 1497 և 1695) և երկու օրինակ՝ Պետական ռեսպուբլիկական գրադարանի անձնակազմի հավաքածուում: Գրքի վերջում գետնդրված է մի հիշատակարան (էջ 164—182), որը կարելի է տեղեկություններ է տալիս ժամանակակից բաղարական անցուդարձի և տպարանի պատմության մասին: Մատենադարանի տպարանի հիմնադրման և տվյալ գրքի տպագրության մասին հիշատակարանում ստված է. «...Պր բնությունից ըզնորարոյս ծաղիկս և զնախախայծ պտուղս գոյս, նախապէս ներեցեր տհասութեան սորին... Քանզի՝ սա պարագայիս խորովր՝ յամենայնի նոր է և անփորձ նմանապէս և փորձավարն սորին անկիրթ և երբէր չտեսնալ ամենեկին. (էջ 176):

Տպարանը գործի գրվելուց հետո թղթի մեծ պաշարի կարիք է զգացվում և բանի որ դրսև աշխարհից մեծ բանակությամբ թուղթ ստանալը դառնել էր միանգամայն աննախն, 1776 թ. Սիմեոն Երևանցուն մեծ գծավորությամբ աջակցում է էջմիածնում հիմնադրել թղթի գործարանը: Այստեղ պատրաստված թղթի վրա 1779—1783 թթ. տպագրվել է Սիմեոն Երևանցու «Գիրք որ կոչի պարտավճարը» Այդ երկում է գրքի տեսքով վերջում բերված ոտանավորից, որ սկսվում է նետեալ բառակով.

Նոր թուղթ՝ նոր գիր՝ նոր տպարան
Բանք և բղնոր ի լոյս ածան.
Յատուկ պարգևք նորոգական
Ազգիս յայց պարգևեցան...:

¹ Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 1, վավ 6:

² Նույն տեղում, վավ. 35:

³ Տե՛ս Մատենադարանի «Իրական նյութերի ժողովածու», Երևան, 1941, N 1:

Թղթի գործարանը գործում է ընդամենը 5—6 տարի, մինչև Սիմեոն Երևանցու մահը:

Սիմեոն Երևանցու օրոք նրա հիմնադրած տպարանում լույս տեսած գրքերից մեզ հայտնի են հետևյալները. Գիրք աղօթից ու կոչի Ջրսարան հոգևոր: Արարեալ ի Սիմեոն... կաթողիկոսի Ամենայն հայոց, էջմիածին, 1772: Տաղարան Սիմեոն Երևանցու, 1773: Տոնացոյց, Աշխատաշիր: Սիմեոն կաթողիկոսի, էջմիածին, 1774: Կարգ քաղման կարգադրաց, էջմիածին, 1777: Տաղարան Սիմեոն կաթողիկոսի, 1777: Գիրք ու կոչի պարտավար, Արարեալ Սիմեոն... կաթողիկոս, 1779: Այս վերջին գրքի տպագրությունը, ինչպես տպեց, սկսվել է 1779 թ., բայց Սիմեոն Երևանցու հիմնադրության պատճառով ախարավել է նրա մահվանից հետո, 1783 թ. փետրվարին, Ղուկաս կաթողիկոսի օրոք:

Ղուկաս կաթողիկոսի (1780—1799) օրոք շարունակվում է տպարանի գործունեությունը: Նրա օթոտակության տարիներին ապագրվում են.

Փամագիրք ասեկի, յորում պարտական էր երեք դիրք, էջմիածին, 1784:

Պատմագիրք արարեալ Յովսեփոսի Երեւանցու: Թարգմ. ի լատինացոյ բարբառոյ ի մեր լեզու... տեսն Ստեփաննոսի Իլովացոյ..., էջմիածին, 1785:

Մատենագարանում պահվող ձեռագրերի շարքում պահպանվել է Հովսեփոս Երեւանցու պատմության հայերեն թարգմանության Ստեփանոս Իլովացու ձեռագիրը, որը և հիմք է ծառայել սույն տպագրության:

Ստեփան Գալսթի, որ և կոչի Սաղմոսարան. Տաղարեցեալ ի մեծ Աթոռոյ էջմիածնի, հրամանաւ Տեառն Երրազան կաթողիկոսի ամենայն հայոց, ի թուոյ մերում ՌԻԼԶ (1787) ի տպարանի սրբոյ Հուսափորին, 418 էջ, 16×11 սմ. չափի: Այս Սաղմոսարանի հայտնի չի եղել Բեռլինին, Գ. Ջարպահանյանին և Գ. Լեոնյանին: Նրա մասին հիշատակություն չկա նաև Վահան Վ. Գալմագարյանի «էջեր սուրբ էջմիածնի տպարանի պատմությունից» հոդվածում, Ղուկաս Կարենցու օրոք տպագրված գրքերի ցանկի մեջ⁴: Այս Սաղմոսարանից մեկ օրինակ պահպանվել է Պատմության թանգարանի գրադարանում:

Խորհրդատուս սրբազան պատարագի, քառ արարողութեան սրբոյ եկեղեցոյս Հայաստանայց, էջմիածին, ՌԻԼԷ (1788), 35 էջ, 23×21 սմ. չափի (Մատենագարան, Հնատիպ գրքերի հավաքածու, N 1306): Այս խորհրդատուսը նույնպես ահայտ է մնացել մեր մատենագեաներին⁵:

Ճարակնոց երամասկան եղեղմունք հոգևորականք, էջմիածին, ՌԻԼԸ (1789):

Տաղարան փոփոխի. Սիմեոն կաթողիկոս, 1793:

Ղուկաս կաթողիկոսից հետո էջմիածնի տպարանը երկար ժամանակով դադարում է գործելուց: Այլ երիցյանը գրում է. «Տաղարան փոփոխի-ի տպագրությունից հետո տպարանն ու գործարանը դադարեցին, ապա այնուհետև տիրած խառնակ տարիքում պարսիկները չափը տակեցին, տարան և ոչնչացրին գործարանի պղնձ և երկաթե մեքենայքը և տպարանի տառերը⁶: Թեոդիկը նշում է, որ «1793 թվականին վերջ, կես դար շարունակող տպարանական ամբողջություն մը կտրե էջմիածին: Վերագրելի քաղարական գեպերսու, որոնք կտաղնապեցուցանեն Հայ աշխարհը, հետևապես նաև Ս. Աթոռ: Հովհաննես Բ Կարենցու կաթողիկոսի օրոք միայն, 1842-ին կապվի Հ. Շահաթյանյանի «Ստորագրություն կաթողիկե էջմիածնի շահեկան երկհատոր գիրքը»⁷: Գ. Լեոնյանը այդ դադարը հասցնում է մինչև 1838 թ., երբ լույս տեսավ «Հարիւր և չորս պատմութիւն հաւարեալ ի հին և նոր կտակարանէ» սուտերնից Բարգմանված գիրքը⁸:

Էջմիածնի տպարանում տպագրված գրքերը պրպտելիս մեր ձեռքն ընկավ մի Սաղմոսարան, որը լույս է տեսել 1819 թ.: Այս թվականը, ինչպես տեսնում ենք, բավականաչափ հետո է

⁴ Սիմեոն կաթողիկոսի գրած և 1773 և 1777 թթ. տպագրված տպարաններից չի պահպանվել Հայաստանի ոչ մի գրադարանում:

⁵ Հովսեփոս Երեւանցու պատմության գրչագիր օրինակներից 4-ը պահվում են մեր Մատենագարանում, որոնցից Ստեփանոսի ձեռքով գրվածը կրում է 1909 համարը:

⁶ Պատմության թանգարան, Հնատիպ գրքերի հավաքածու, N 464:

⁷ «Էջմիածին», 1958, տպու., էջ 53:

⁸ Տե՛ս «Բանբեր Մատենագարանի», Երևան, 1958, N 1, էջ 428—429:

⁹ Այլ երիցյան, Պատմական տեսություն հայ տպագրության, Տփլիս, 1879, էջ 26:

¹⁰ Թեոդիկ, Տիպառ տառ, էջ 177:

¹¹ Գ. Լեոնյան, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1958, էջ 215:

Յև Քեղդիկի և թե Գ. Լեոնյանի նշած թվականներից: Քերոմ էնր Սաղմոսարանի լրիվ տխրոսաթերթը. Սաղմոս Գավթի Որ և կռչի Սաղմոսարան. Տպագրեցեալ ի Մեծի Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի Հրամանաւ Տեառն Եփրեմի... կաթողիկոսի ամենայն Հայոց, ի թուոջն մերում ԽՄԿԸ (1819) ի տպ. ս. Լուսավորչին 417 էջ. 16 X 11 սմ. չափի (Մատենադարանի Հայագիտական դրագարան, N 22136):

Այս Սաղմոսարանը անհայտ է մնացել մեր մատենագիտներին¹²: Դրա, ինչպես և մի շարք այլ գրքերի առկայությունը ապացուցում է, որ տպարանական գաղարը այնքան երկարատև չի եղել, ինչպես ենթադրվում էր: Սաղմոսարանի հիշատակարանի մեջ ասվում է, որ երկար տարիներ անգործության մատնված տպարանը եփրեմ կաթողիկոսի շրջի հիմնովին նորոգվում է գործի է գրվում. «...Արդ որք յանդիման լինիր սովաւ մի ձանձրասցիր չիշել... Տէր Սիմէօն... լոգնաշխատ կաթողիկոսն և մանավանդ զփերանորոգոյն տպարանին զՏէր եփրեմ յոգնավիշաւրբազան վեհապետն, որ ի Նեղոթեանս ժամանակի... պայծառացոյց և զերել ի հիմնել սոսոցեաց զտպարանն սրբոյ զահիս... զխանգարեալն ի բազում ամաց հետէ» (ընդգծումը մերն է—Շ. Շ.):¹³

Եփրեմ կաթողիկոսի օրոք «Սաղմոսարան»-ից հետո լույս է տեսել ևս մեկ գիրք: Դրա տխրոսաթերթում կարդում ենք. Կառակ վասն փրկագործ Չարչարանաց և խաչելութեան Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի: Ի տասներորդում ամի Հայրապետութեան Տ. Տ. եփրեմայ... կաթողիկոսի... Յամի տեառն 1820, մարտի 26, ի տպարանի սրբոյ Լուսավորչին. 30 էջ, 18 X 12 սմ. չափի (Մատենադարանի Հայագիտական գրագարան, N 7955): Այս գիրքը նույնպես չի հիշատակվում մեր մատենագիտների մոտ:

Որոշ գաղարից հետո տպարանը վերակառուցվում է գործել Հովհաննէս Կարբեցի կաթողիկոսի օրոք, բայց այնուամենայնիվ դարձյալ ամօրի շուտ, քան ենթադրվում էին Գ. Լեոնյանը և Քեղդիկը: Այդ է ապացուցում մեր ձեռքի տակ եղած 1833 թ. տպագրված «Չայնարազ շարականը», որ նույնպես անհայտ է եղել մեր մատենագիտներին: Դրա լրիվ տխրոսաթերթը հետևյալն է. Չայնարազ շարական յորում բովանդակեն հոգևորապէս պաշտօնեցողութիւնը սուրբ եկեղեցւոյ Հայաստանեայց ի փառաբանութիւն... Ի Հայրապետութեան... Յովհաննէս Կարբեցւոյ... ի սուրբ կաթողիկէն Էջմիածին. Յամի տեառն 1833 և հայոց ԽՄԸԲ, 56 էջ, 33 X 22 սմ. չափի: Այս գրքի հիշատակարանում ուշադրով են հետևյալ տողերը. «Արդ՝ որք վայելէր զհոգեշունչ երգարանս... չիշեցիր յարժանաւոր մաղիանս ձեր զփերահաստատօղն Տպարանիս... ութերորդ Յովհաննէս Կարբեցի... կաթողիկոսն ամենայն Հայոց, որ յեա վճարելոյն զմեծ մասն պարտուց սրբոյ Աթոռոյս՝ հոգ կալաւ մեծաջան աշխատութեամբ և վասն շինութեան և պայծառութեան սորին, որ ահա իբրեւ գիր տառքին նախախաջ պատու գտոյն երգարան ի լոյս բնծայեաց վերստին տպագրութեամբ»¹⁴:

Չայնարազ շարականից հետո տպագրվել են հետևյալ գրքերը.

Իրեմ հանդիսադուրեանց տօնից կայսերականաց: Շարակարգեալ ի Սիմէօն կաթողիկոս... յաւելուածովը նորահիւս շարականս և աղօթից. Յամի տեառն 1833. Տպեալ 3-րդ անգամ¹⁵:

Տօնացոյց... յօգնական կարգադրութեամբ և աշխատասիրութ. Տ. Սիմէօնի սրբազան կաթողիկոսին... ս. Էջմիածին տպագրեալ... ի վեհափառ Հայրապետութեան... Տեառն 8-րդ Յովհաննէս Կարբեցւոյ... Յամի 1835, 576 էջ, 16 X 11 սմ. չափի (Մատենադարանի Հայագիտական գրագարան, N 7930): Սրա հիշատակարանի մեջ կարդում ենք. «...չիշեցիր... զփերահաստատօղն տպարանիս... Յովհաննէս Կարբեցի... կաթողիկոսն... ազգասիրութեամբ և մեծաջան աշխատութեամբ հոգ կալաւ վասն շինութեան և պայծառութեան սորին» (էջ 575): Գ. Չարպանեանյանի մատենագիտության մեջ «Տօնացոյցների» համալածում նշված է Ս. երևանցու «Տօնացոյց»

¹² Տե՛ս «Թանգեր Մատենադարանի», Երևան, 1958, N 4, էջ 454:

¹³ «Սաղմոսարան», Էջմիածին, 1819, էջ 415: Բոս վաճան Գալամդարյանի, եփրեմ կաթողիկոսի օրոք «Տպարանի վերակառուցման աշխատանքները շարունակվում են, բայց տպարանը չի գործում» (տե՛ս «Էջմիածին», 1958, N 9, էջ 36):

¹⁴ Մատենադարան, Հայ գրակ. հախարածութ., N 8684, էջ 562 (ընդգծումները մերն են—Շ. Շ.):

¹⁵ Այս գրքի առաջին տպագրությունը լույս է տեսել Ն. Նախիջևանում, 1794 թ., «Գիրք աղօթից սակս քոտ արժանույն հանդիսի տօնեցելոյն...» վերնագրով: 111 հրատարակության մեջ ակնհայտ էն հավելումները սկզբից և վերջից: Տե՛ս նաև «Թանգեր Մատենադարանի», 1958, N 4, էջ 435:

ցի» առաջին՝ 1774 թ. հրատարակությունը Երկրորդ և վերջին հրատարակությունն աշտակ համարված է Կ. Պոլսի 1799 թ. հրատարակությունը, իսկ այս՝ 1835 թ. հրատարակությունը չի հիշատակված¹⁶:

Երբ որ Կոչի Մաշտոց, յորում առանկեն սրբազան արարողությունը ազգիս բոս սահմանադրության սուրբ եկեղեցւոյն Հայաստանեայց՝ 1836, 447 էջ, 19 X 12 սմ. շափի (Մատենադարանի հայագիտական գրադարան, N 11432) և յս գիրքը չի հիշատակված Թեոդիկի «Տիպ ու տառ»-ի էջմիածնի տպարանի հատվածում և: Ա. Ղազիկյանը «Մաշտոց» հատվածում ենթադրում է, որ 23-րդ հրատարակությունը 1836 թ. էջմիածնում տպագրածը պետք է լինի, սակայն իր ենթադրությունը դնում է հարցականի տակ¹⁷: Այս «Մաշտոցի» մասին հիշատակություն չկա նաև Գ. Լեոնյանի մոտ¹⁸:

Իսթանբուլյն կազմադրուիլն. Յաղագս կառավարութեան գործոց Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ ի Ռուսաստան, 1836:

Հաւիւր և չուս սուրբ պատմութիւն. 1838:

Ուշոց զիւր: Որ բոս խորհրդոյ և բոս պաշտօնի ի բարանչիւր աւուրց տարւոյն զհին և զնոր զկառարանացն բանս ի սուրբ եկեղեցիս Հայաստանեայց բնթեոնելիս բնոյ այլ հարկաւոր աղօթից և ճառից շարակարգելոց... Տպեալ... Յամի տեառն 1839 և հայոց ՌԲԶԸ, ի տպարանի գերագահ Աթոռոյն Սրբոյ կաթողիկէ էջմիածնի, 511 էջ, 45 X 25 սմ. շափի (Մատենադարանի հայագիտական գրադարան, N 9948) և յս գիրքը հարուստ է գլխագրերով և նկարներով: Այս մեծագիր «Ճաշոց» անհայտ է մնացել մեր մատենագետներին. նրա մասին հիշատակություն չկա Ա. Ղազիկյանի «Հայկական նոր մատենագիտություն» մեջ, որի «Ճաշոց» հատվածում 6-րդ հրատարակությունը համարվում է Կ. Պոլսի 1793 թ. տպագրությունը, 7-րդը՝ Կ. Պոլսի 1799 թ., 8-րդը՝ 1872 թ. էջմիածնի տպագրությունը, իսկ 1839 թ. տպագրությունը դուրս է մնացել սրա յանկից¹⁹: Թեոդիկի «Տիպ ու տառ»-ի մեջ նույնպես չկա հիշատակություն դրա մասին: Գ. Զարուհանյանը «Ճաշոց»-ի 3-րդ հրատարակությունը համարում է Կ. Պոլսում 1793 թ. տպագրածը, իսկ 4-րդը՝ էջմիածնի 1874 թվականինը²⁰:

Խորհրդատեաւ սրբազան պատարագի. բոս արարողութեան սրբոյ եկեղեցւոյ Հայաստանեայց Տպագրեցեալ... հրամանաւ Տեառն Ղուկասու... կաթողիկոսի... Յամի ՌԶԶԸ, Վերստին տպեալ... հրամանաւ Յովհաննու ութերորդ Կարգեցոյ... կաթողիկոսի... 1840... 35 էջ. 31 X 21 սմ. շափի (Մատենադարանի հայագիտական գրադարան, N 8680): Ա. Ղազիկյանը «Խորհրդատեալ» հատվածում էջմիածնի տպարանում տպագրված խորհրդատեալներից նշել է միայն 1873 թ. տպագրությունը (էջ 1167): Այդ տպարանում տպագրված 1788, 1840 և 1866 թվականներին հրատարակվածները չեն նշված:

Կերակուր Բաճաճից, 1841:

3. Շահխաթունեան. Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացի Արարատայ, 1842:

Արեւսա քուարանութեան աշխատութեալ ի Կարապետ Ա. Սարկաւազէ Շահապարեանց, ռուսոցչէ թուարանութեան ի ճեմարանի Սրբոյն էջմիածնի... էջմիածին: 1842, 140 էջ, 23 X 15 սմ. շափի (Մատենադարանի հայագիտական գրադարան, N 8283) և յս գիրքը նույնպես անհայտ է եղել մեր մատենագետներին: Կոստանյանի «Կարապետ Ա. Շահապարեանի կենսագրություն» աշխատությունից իմանում ենք, որ Կ. Շահապարեան էջմիածնի միարաններից է եղել: Նա 1835 թ. ուղարկվել է Թիֆլիս՝ Արղանյանների մասնավոր վարժարանում ուսուցիչի և թվարանապետի մեջ կատարելագործվելու: 1836 թ. Հովհաննես Կարբեցին նրան ուղարկում է Մոսկվայի Լազարյան ճեմարանում սովորելու: 1839 թ. նա ավարտում է ճեմարանը, վերադառնում էջմիածին և նշանակվում Մայր Աթոռի ժառանգավորաց դպրոցի ուսուցիչ և տեսուչ: Նա գաղափանդում է հայերեն, ուսուցիչ և թվարանություն: Այդ տարիներին գրում է գաղափարներ: Այս աշխատություններից գաղափարներ էլ գրվել է այդ տարիներին և 1842 թ. տպագրվել էջմիածնի տպարանում: Կ. Կոստանյանը վերը հիշված գրքի մեջ նշում է սույն թվարանության գաղափարի 1849 թ. տպագրությունը:

16 Տե՛ս Գ. Զարուհանյան, Հայկական մատենագիտություն, Վենետիկ, 1883, էջ 682—685:

17 Տե՛ս Ա. Ղազիկյան, Հայկական նոր մատենագիտություն, էջ 196:

18 Գ. Լեոնյան, նշվ. աշխ., էջ 215:

19 Ա. Ղազիկյան, նշվ. աշխ., էջ 1690—1691:

20 Գ. Զարուհանյան, նշվ. աշխ., էջ 385—386:

Այսպիսով, Հովհաննես Կարբեցին կաթողիկոս ձևանագրվելուց հետո վերանորոգում է տպարանը և 1833—1842 թթ. ընթացքում տպագրել է տալիս տասնմեկ գիրք։ Այդ գրքերի տիպոգրաֆերների ու հիշատակարանների տվյալների հիման վրա ժխտվում է այն սխալ կարծիքը, որ կա տպագրության գործի պատմությանը պատկանող մեր բանասերներից Քեղիկի, Գ. Լևոնյանի, Ալ. Նրիցյանի և ուրիշների մոտ, որոնք տպարանի գործունեության երկարատև գաղափար 1793 թվականից հասցնում են մինչև 1842 թվականը։

Շ. ՇԱՀԱՋԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԱՌԱՋԻՆ ՕՐԿԱՆՆԵՐԸ

«Թուֆակ Հայկազյան» խորագիրը կրող պարբերականի մասին հիշատակություններ կան Գ. Գալեմբյարյանի, Գ. Լևոնյանի և Հովհ. Պետրոսյանի մոտ։ Մականյա այդ հեղինակները հակառակն, երբեմն անձիշտ տեղեկություններ են հաղորդում գրեթե անհայտ այդ պարբերականի բնույթի, լույս ընծայման ժամանակաշրջանի, խմբագիր-հրատարակիչների ու աշխատակիցների, ծավալի, ինչպես նաև հրատարակության հանդամանքների մասին։ Ավելին, անծանոթ լինելով պարբերականին, Հովհ. Պետրոսյանը, ոչ միայն չի տվել նրա որևէ համարի բիրյիտ-դրաֆիան, այլև «Թուֆակի Հայկազյանին» ենթադրաբար վերագրել է «սպագյին, անտեսուկան» բնույթ¹։

Զմյուռնիայի հայ մամուլի պատմությունն ուսումնասիրելիս, մենք հանգիսեցինք «Թուֆակ Հայկազյանին» վերաբերող մի շարք տպագիր աղբյուրների, ինչպես նաև հաջողվեց ձևարերել պարբերականի երկու համարների միկրոֆիլմը։ Գրանք նարավորություն են ընձևում մոտիկից ծանոթանալու այդ պարբերականին, գնահատելու այն, ճշտելու նրա պատմության համար կապված մի շարք հարցեր։

Մեր խոսքը նախ և առաջ Մեսրոպ Նուպարյանի «Իմ մանկական հիշողությունները» վերնագրով մեմուարի մասին է, որ տպագրվել է «Արևելյան մամուլ» 1893—1894 թթ. համարներում։ Ուրվագծելով Մեսրոպյան վարժարանի առաջին շրջանի պատմությունը, Մ. Նուպարյանը խոսում է նաև վարժարանի սաների հրատարակած տպագիր պարբերականների մասին։ Իրանցից առաջինը հենց մեզ հետաքրքրող «Թուֆակ Հայկազյանն» է, Նուպարյանը վկայում է, որ Մեսրոպյան վարժարանի մի խումբ սաներ մանկավարժ Անդրեաս Փափազյանի հորդորներով ու խրախուսանքով հիմնել են սեփական տպարան²։ Իսկ, իրականում, նույն հուշագրողի վկայությամբ, մի ժամանակ և ամենախեղճ հաստատություն էր և «հագիվ տպարանի մերկույթը կրնձայեր»։ Տպարանի համար իրեն շենք ծառայում էր ինչ-որ լրված տան մի անկյունը (սորել տան մ'որել նկատված մեկ սենյակի մեջ)։ Աշակերտական այդ տպարանը չունեի նաև անհրաժեշտ տարավորություն և տպագրական մեքենա։ Նրա մամուլները իսկական տպագրական ստորի «հետ հետանց միայն նմաններ մը կրերին» և փայտից էին պատրաստված։ Տպարանի տառային ֆոնդը ևս չափազանց խղճով էր։ Նրանում Զմյուռնիայում գործող գանազան տպարանների հին տառերն էին օգտագործվում։

Նուպարյանի այդ և այլ աղբյուրներում հրատարակված հուշերը լույս են տալիս նաև «Թուֆակ Հայկազյանի» խմբագրի ու հրատարակչի հարցի վրա։ Հակառակ հին և նոր այս վկայությունների, որոնք պարբերականի խմբագիր են համարում ա. Վրթանեսին³, Նուպարյանը պարզ ու որոշ հիշատակում է, որ նրա խմբագիրները և ընդհանրապես հրատարակիչները եղել են Մեսրոպյան վարժարանի բարձր դասարանի աշակերտները։ Իրենք՝ աշակերտները գրում էին կամ թարգմանում «Թուֆակ Հայկազյանի» նյութերը, իրենք շարում ու սրբագրում էին, իրենք էլ տպագրում ու տարածում։ Ինչ վերաբերում է պարբերականի խմբագրելուն,

¹ Հովհ. Պետրոսյան, Հայ պարբերական մամուլի բիրյիտդրաֆիա (1794—1900), Երևան, 1956, էջ 170։

² «Արևելյան մամուլ», Զմյուռնիա, 1894, էջ 730։ Անդրեաս Փափազյանի մանկավարժական գործունեության մասին տե՛ս մեր համառոտ տեղեկություն տպագրված «Մեմուարական մանկավարժ» ամսագրի 1962 թ. N 11-ում (էջ 73—80)։

³ «Մատիս» 1884 թ. N 3731-ում տպագրված հայ մամուլի ցանկի կազմողը (Մ. Ն. Նուրիկյան) ևս պարբերականի խմբագիրը համարում է ա. Վրթանեսին (էջ 56)։ Այս աղբյուրի վրա է հենվել Գալեմբյարյանը նշելով, թե պարբերականի հրատարակիչը ա. Վրթանեսն է։

ուսումնական պարտականությունները կապառնում էին «երեք բնկերակի ու գործողականները»⁴։ Պատկերապես այս երեք խմբագիրներից մեկը հենց տ. Վրթանեսն էր, բայց դա դեռ բավական չէ «Թուրքական Հայկազյանի» խմբագիրը և տպարանատեր տ. Վրթանեսին համարելու համար, ինչպես դա, վերահիշյալ ազդեցություններից դատ, արել են Հ. Քոստանը⁵ և Զմյուռնիայի հայկական գաղութին նվիրված արժեքավոր «Հուշամատուցանի» հեղինակը՝ Առաքել Կո, որ Վրթանեսի անունը չենք գտնում «Թուրքական Հայկազյանի» աշխատակիցների ու ղեկավարների ցանկում։

«Թուրքական Հայկազյանի» լույս ընծայման ժամանակաշրջանը համարվում է 1854—1855 թթ. և նկատվում այդ տարեթիվը, Գ. Լեոնյանը, իսկ նրա հետադարձը՝ Նաև Հովհ. Պետրոսյանը գրում են, թե այն մի տարվա կյանք էլ չի ունեցել և 1855-ի սկզբներին փակվել է։ Բայց գեոհո 1894 թ. Մ. Նուպարյանը վկայել է, որ Մեսրոպյան վարժարանի աշակերտների «առաջին խումբը տարի մեկ հետև իր հատուկ ազդեցություն Փոքրակ կրատարակեր», երբ երկրորդ խումբը հրատարակեց «մի այլ պարբերական՝ իրեն մրցակից Փոքրակ Հայկազյանի»։ Թեև հայտնի չէ, թե որքան է տևել այդ մրցակցությունը, գովառ չէ եզրակացնել, որ պարբերականն իր գոյությունը պահպանել է մեկ տարուց էլ ավելի։ Մեզ թվում է, հավաստի չի կարելի համարել Նաև պարբերականի գաղափարն Մինչև այժմ ընդունված թվականը՝ 1855-ը։ Ավելի հավանական է, որ պարբերականը գաղափար է հաջորդ տարին, երբ Մեսրոպյան վարժարանի հետադիմական հոգաբարձության հաջորդից գաղափար էլ իր սաների տպագրական գործունեությունը խրախուսող առաջադեմ մանկավարժ Անդրեաս Փափազյանին։

Փոքրածավալ այս պարբերականը, չնայած «օրագիր» վերադասությանը, լույս էր տեսնում ամիսը մեկ անգամ, բայց ոչ կանոնավոր համախառնություններ։ Մեզ հայտնի ազդեցություններ կոնկրետ գաղափար չեն տալիս այն նյութերի մասին, որոնք գեոհովել են ամսագրում, այն հարցերի մասին, որոնք արժանավեր են նրա էջերում։ Այդ պակասը որոշ չափով լրացնելու նարավորություն են բնծնում պարբերականի պահպանված երկու՝ 1855 թ. մարտ (N 3) և մայիս (N 5) ամիսների համարները։

Նկատի ունենալով, որ այդ պարբերականից Սովետական Հայաստանի և Միության գրադարաններում չկա և որ այն կարող է հետաքրքրել հայ մամուլի, ինչպես Նաև գաղութային գաղափար պատմությունն ուսումնասիրողներին, համառոտակի անդրադառնանք այդ երկու համարներին։ Նախ և առաջ աչքի է զարնում այն, որ ամսագիրն ունեցել է իր որոշակի պրոգրիզ։ «Բարեպաշտ, բանասիրական և ուսումնական» — այս խորագիրն ինքնբերական վկայություն է այն մասին, որ պարբերականն ունեցել է գաղափարական-ուսուցողական բնույթ։ Թեև այն չի փայլում իր ձևավորումով, բայց պատանի հրատարակողները նյութերը անգավառել են բոտ բաժինների, էջերը շրջափակել զուգահեռագծերով, նյութերը շարել երկու սյունով, օգտագործել տարբեր տառատեսուչներ։ «Թուրքական Հայկազյանի» սովորական ծավալը մեկ մամուլ է (16 էջ)։

Ամսագրի այս համարներում գեոհոված նյութերը բազմազան են՝ բերթվածներ, ոտանավորներ (մեծ մասը գրաբար), պատմություններ, գրույցներ, հետաքրքրական հաղորդումներ, հանդուկներ, նամակներ, որոնք գրված են արևմտահայ գրական լեզվով։ Դրանք գլխավորապես թարգմանական են և հիմնականում բնույթապար, որն բոտ երևույթին կոչկալով աշխատանքով ստեղծված լինելու հետևանքն է։ Նյութերի հեղինակներից, բացի «Զ. Ս. Ա.» և «Ա. Ս. Յ. Պ.» սկզբնառառերով ստորագրողներից, հայտնի են Վ. Հար. Սիմոնարյանը, որը թարգմանություն է կատարել հունարենից և Գալուստ Կոստանդյանը, որն ամսագրի N 3-ում գեոհովել է անդլերենից թարգմանված մի գրույց։

«Թուրքական Հայկազյանը», որքան դա հնարաճար է գատել մեզ հայտնի երկու համարներից, կապված չէր բուն կյանքի, առաքել ևս Մեսրոպյան վարժարանի և գմյուռնահայ իրակա-

4 Նշան Պատկերայան, Տարեցույց, 1907, Կ. Պոլիս, երկրորդ բաժին, էջ 14։

5 Հ. Քոստան, Հայր ի Զմյուռնիա և ի շրջակայս, Վիեննա, 1899, էջ 278։

6 Պ. Սիմոնյան, Հուշամատուցան. Հայկական Զմյուռնիա, Փարիզ, 1936, էջ 36։

7 Մենք օգտվում ենք այդ համարների մեր ստացած միկրոֆիլմից հանված լուսանկարչական պատճենից, որի երկու օրինակը տրամադրված են Ա. Մյասնիկյանի անվան պետական հանրային գրադարանին։

8 Այս փաստն իրավունք է տալիս վկայելու, որ հայտնի փոխդիտ-բնագետ Գալուստ Կոստանդյանը սկզբնապես սովորել է Զմյուռնիայի Մեսրոպյան վարժարանում և գեո մանուկ հասակից հանդես է եկել աշխարհաբար թարգմանություններով, հանդամանքներ, որոնք ինքնբերական հետաքրքրական են նրա էջանքն ուսումնասիրողներին։

նություն հետո Այն ափելի շուտ դպրոցականների բնակեցանության համար նախատեսված նյութերի ուրույն ժողովածուի տպագրությունն է թողնում:

